**«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»**

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ - ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ԱՌԱՐԿԱ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ **ԾՈՎԻՆԱՐ ՇԱՀԲԱԶՅԱՆ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ _

**ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ**

ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

2022թ

## Ներածություն

Դժվարամատույց է հայոց
լեզուն՝ իր քառակի պարիսպ-
ների մեջ։ Նման ամրոցը գրո-
հով առնել անհնարին է, կա-
րող է օգնել միայն երկարատև
պաշարումը։

Պ. Սևակ

Հիրավի, աշխարհի հնագույն ու գեղեցկագույն լեզուներից մեկը՝ ոսկեղենիկ հայերենը, դժվարամատույց է, բարդ աչքի պես, բարդությամբ էլ առինքնող։ Հիշենք, թե ինչպես էր մեր մայրենիի մեծագույն ջատագով մեծն Բայրոնը, հիանալով վերջինիս սքանչելիությամբ ու անզուգականությամբ, «հրովարտակ արձակել».

Եթե ուզում եք Աստծուն աղոթել,
Աղոթե՛ք հայերենով։
Եթե ուզում եք Աստծո հետ խոսել,
Խոսե՛ք հայերենով։

Հայոց լեզվի սիրահարներն ու նվիրյալ մասնագետները երկարտև պաշարման, մանրակրկիտ պրպտումների արդյունքում թափանցել են ամրոցի խորքերը, պեղել նրա գաղտնարանները, հայտնագործել, հայտնաբերել, հիացել ու զարմացել, նաև հիացրել ու զարմացրել։ Եղել են կարծիքների և՛ համընկնումներ, և՛ տարաձայնություններ։

Բարդագույն բաժին է հայերենում շարահյուսությունը, առաձգական. որքան ձգես, այնքան ձգվում է։ Երախտավոր շատ լեզվաբաններ իրենց ծանրակշիռ տեսակետներն են արտահայտել ու հիմնավորել։

Դպրոցական դասընթացում՝ 8-րդ դասարանում, շեշտը դրվում գերազանցապես երկկազմ նախադասությունների ուսումնասիրության վրա, իսկ միակազմ նախադասություններին անդրադարձ քիչ է կատարվում։ Կարծում եմ՝ վերջիններս խոսքին յուրօրինակ գեղեցկություն, թարմություն ու հմայք են տալիս և աշակերտին հաճելիորեն հաղորդակից են դարձնում ժողովրդական բառ ու բանին, առած-ասացվածքներին, դարձվածքներին։ Ցավով ենք արձանագրում, որ ժամաքանակի սղությունն է թերևս խանգարող, խոչընդոտող այն պատճառը, որը թույլ չի տալիս նախադասությունների այս հետաքրքիր շերտը ուսումնասիրել, ճանաչել հանգամանորեն։ Հազարագանձ հայոց լեզվում այս մասունք- գանձը չթողնենք տուփում կամ հորում, այլ հասցնենք սովորողին, նաև սովորեցնելով սովորենք։ Ըստ մեր տեսակետի՝ նպատակահարմար է և անհրաժեշտ ուսումնասիրությունը կազմակերպել բարձր դասարաններում։ Սովորողն արդեն յուրացրած կլինի երկկազմ նախադասությունները, հետևաբար միակազմ նախադասությունները հեշտ կընկալի։ Այս նախադասությունները, լինելով ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ, ժողովրդի իմաստությամբ հագեցած, իրենց փայլով առավել են շքեղացնում մեծ փիլիսոփա – բանաստեղծ-գրող-լեզվաշինարար Պ. Սևակի ինքնատիպ ստեղծագործությունները։

# ՄԱՍ Ա

## Անենթակա նախադասություն

«Երկկազմ նախադասությունը կազմվում է երկու գլխավոր անդամներով՝ ենթակայով ու ստորոգյալով: Հայերենում դրանք առավել գործածական են:

Կան նախադասություններ էլ, որոնք միաբևեռ են, ունեն միայն բայ-ստորոգյալ, ենթակա չունեն՝ *Մթնեց: Երեկոյանում էր: Լուսանում էր*: Սրանք մոտ են երկկազմ նախադասությանն այնքանով, որ գլխավոր անդամն արտահայտված է դիմավոր բայով, բայց և հեռու է նրանից, քանի որ չունեն ենթակա, միակենտրոն են, սրանով էլ մոտենում են միակազմ նախադասություններին:

Կան նախադասություններ էլ, որոնք ո՛չ ենթակա ունեն, ո՛չ ստորոգյալ. նրանց գլխավոր անդամն արտահայտվում է որևէ գոյականով կամ անորոշ դերբայով՝ Կանաչները *չտրորե՛լ*: Բարձր *չխոսե՛լ*: *Մթություն* ամենուրեք: Միակազմ նախադասությունները կազմությամբ լինում են պարզ համառոտ՝ *Ցրտեց: Լռությու՛ն: Պառկե՛լ*: Նաև պարզ ընդարձակ՝ *Երեկ երեկոյան անձրում էր*: Կարող են լինել բարդ՝ *Ամռանը ուշ է մթնում,ձմռանը՝ շուտ*: Կարող են լինել բարդ նախադասության բաղադրիչ՝ Մենք ճամփա ընկանք, *երբ լուսացել էր*:

Միակազմ նախադասությունները լինում են երկու տեսակ՝ դիմավոր միակազմ և անդեմ միակազմ, վերջիններս էլ իրենց հերթին լինում են բայական և անվանական անդեմ նախադասություններ:

Անդեմ նախադասություններ են նաև բառ-նախադասությունները[1]»:

Հայերենում միակազմ նախադասությունների ուսումնասիրությամբ զբաղվել են լեզվաբաններ Ս. Գյուլբուդաղյանը, Մ. Ասատրյանը, Գ. Սևակը, Գ. Ջահուկյանը, Ն. Պառնասյանը, Ս. Աբրահամյանը և այլք: Նրանք իրենց ծանրակշիռ ավանդն են ներդրել այդ բնագավառում, տվել սպառիչ բնութագրումներ, հավանաբար նոր քերականները ավելացնելու քիչ բան կունենան:

«Անենթակա են կոչվում այն նախադասությունները,որոնք չունեն ենթակա և չեն կարող ունենալ: Ունեն միայն մի գլխավոր անդամ՝ ստորոգյալ, որն արտահայտվում է դիմավոր բայով:

[1] Տե՛ս Ս. Վ. Գյուլբուդաղյան,Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1988թ., էջ 121-122:

Այս նախադասությունները տարբերվում են այն նախադասություններից, որոնց ենթական զեղչված է, բայց կարելի է վերականգնել բայի դեմքի, խոսքային միջավայրի միջոցով։ Օրինակ՝ Սիրում եմ մեր երկինքը մուգ.... նախադասության բայ-ստորոգյալի դեմքից երևում է, որ ենթական խոսողն է[2]»։

Անենթակա նախադասությունները Գյուլբուդաղյանը խմբավորում է երեք տեսակի մեջ։

«1.Վիճակային կամ բուն անենթակա՝ Ամպել է։ Գարուն է։ Լռություն է։ Այս նախադասություններում գերադաս անդամը արտահայտվում է բայի սահմանական, ըղձական,ենթադրական,հարկադրական եղանակներով, միշտ եզակի թվով և երրորդ դեմքով (կայծակում է, կցրտի, պիտի ցրտի)։ Այս նախադասությունների ստորոգյալն արտահայտվում է նաև հարադրավոր բայերով՝ Շաղ է դրել։ Կայծակին է տալիս։ Քունը տանում է։ Ուշքը գնաց։ Վրան դող է եկել։

2. Անորոշ դիմավոր ( անենթակա) նախադասություն։ Այս նախադասության գործողություն կատարողը միշտ անձ է, անձի անուն՝ Զանգը տվեցին։(Հ.Թ.) Ասում են , թե...Փոս փորեցին մի խորին, Մեջը դրին Մարոյին... Երբեմն խոսողն իր միտքն արտահայտում է բայի երրորդ դեմքով, հոգնակի թվով։

3. Ընդհանրական միակազմ նախադասություններ։ Այս նախադասություններով արտահայտված միտքը վերաբերում է մարդուն առհասարակ՝ Նվեր ձիու ատամները չեն հաշվում։ Մի՛ լինի ուրագի պես՝ միշտ դեպի քեզ, այլ եղի՛ր սղոցի պես՝ մեկ դեպի քեզ, մեկ դեպի մեզ (առած)։ Բայի երկրորդ դեմքի և եզակի թվի առկայությունը նախադասություններում ձևական է, ուստի ստորոգյալը դառնում է ենթակայազուրկ[3]»։

«Եզակի երրորդ դեմքով արտահայտված անենթակա նախադասությունների անվանաբայական ստորոգյալները ցույց են տալիս բնության երևույթների, եղանակի, ժամանակի, ինչպես նաև հասարակական իրավիճակների, մարդու անձնական կյանքի հետ կապված վիճակներ, ինչպես՝ «Դուրսը ցուրտ է հիմա, Եվ խավար է , և մրրիկ...(Վ.Տերյան)։ Աշուն էր, պայծառ աշուն...(Ա. Բակունց)։ Իմ հոգում հիմա տխրություն է ու թախիծ,դառնություն ու մահ (Ե. Չարենց)։ Այսօր կիրակի է...

Չնայած այն բանին, որ անենթակա շատ նախադասություններ էլ ձևավորված են բայի եզակի երկրորդ դեմքով, բայց և այնպես այդ դեմքի ձևով արտահայտվում են ընդհանրական մտքեր,

[2] Տես նույնը, էջ 122։
[3] Տես նույնը, էջ 123-126։

որոնք ուղղվում են բոլոր մարդկանց առհասարակ՝ Ուտում ես, ուտում, չես կշտանում։ Շանը մինչև չծեծես, հետդ չի բարեկամանա[4]»,-այս նույն տեսակետն է պնդում Մ. Ասատրյանը։

Մանվել Ասատրյանն այս կարծիքին է. «Հայոց լեզվում անենթակա նախադասությունների մի զգալի մասին զուգահեռ կան համապատասխան նշանակություն ունեցող ենթակայով նախադասություններ, որոնք, սակայն, իմաստով նուրբ տարբերություններ ունեն առաջիններից։ Օրինակ՝ Կե՛ր փորձած թանը, մի՛ կեր անփորձ մածունը // Մարդ ուտի փորձած թանը, չուտի անփորձ մածունը։

Առանձին քերականներ մարդ բառով ընդհանուր անորոշ ենթակա ունեցող նախադասությունները ևս համարում են անենթակա(տես Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան , 1981)[5]»։

Լեզվաբաններ Հ. Զաքարյանը, Յու. Ավետիսյանը անենթական նախադասության այս դրսևորման մասին հայտնում են հետևյալ կարծիքը.«Ընդհանրական դատողություն արտահայտող նախադասությունները երբեմն ունենում են մարդ բառով արտահայտված ձևական ենթակա.Մարդ կա՝ մարդ է,մարդ էլ կա՝ սատանա է։Մարդ չի հասկանում,թե ինչպես վարվի նման դեպքերում։Մարդս մարդ լինի։Սրամց միակազմ կամ երկկազմ լինելը վիճարկելի է[6]»։

Սևակի ՝ խոր պաթոսով արարված երկերում անենթակա նախադասությունների «քաղց» չի զգացվում։Ստորև ներկայացնենք խոսուն օրինակների ծաղկաքաղ,որում առկա է նաև վիճարկելի օրինակը՝ մարդ բառի գործածությունը։

---

[4] Տես Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1987թ., էջ 182-184։
[5] Տես նույնը, էջ 184-185։
[6] Տես Հ.Զաքարյան,Յու.Ավետիսյան, Շարահյուսություն,Երևան,2015թ.,էջ 102

...Սուտ է։ Ո՛չ հորը,ո՛չ մորն է սիրում..»[6]։Միշտ էլ սիրածին  պատահաբար են պատահում կյանքում ... ՈՒ հրաժեշտ են տալիս սիրածին անհրաժեշտաբար... Թե կուզես՝ լռի՛ր։ Թե կուզես՝ ոռնա՛, Թե կուզես՝ ծամի՛ր սեփական լեզուդ... Հավատացյալ ես՝ հայհոյիր աստծուն, Հավատացյալ չես՝ աստծուն հավատա... (հատոր  1., էջ 318)։ Երբ խոր վերքից մարդ ժպտում է համառությամբ, Այդ ժպիտը վերջ ի վերջո փոխարկվում է ծամածռության... Պաղն ավելի լավ ես զգում ամռան շոգին, Դողն ավելի լավ ես զգում Ձմռան բքին... Հողն ավելի լավ ես զգում այն ժամանակ... (հ. 1., էջ 357)։ Թե վաստակածքս գրպանքս մնար՝ Անտեղի տեղը չհալվեր-կորչեր, Ինձ կարող էին և հարուստ կոչել (հ.1.,էջ 359)։ Հյուրասիրում եմ Ձմռան վերջերին՝ խաղողի ճութով, Եթե չեք ճաշել՝ կաքավի ճութով, որին, հավատա, ես չեմ սպանել։ Թե աշխատանքից հոգնել ես, խնդրեմ,Հյուրասիրում եմ կենարար մութով։ Եթե փող չունես և առիթ չունես՝ Չգիտես ինչպես ուրախացնես Կնոջդ սիրած, ի՞նչ է հարկավոր, Ինձ համար հեշտ է, խնդրե՛մ ի՛նչ կա որ՝Հյուրասիրում եմ քեզ... մարտի ութով (հ.1., էջ 374)։ Հայտարարում եմ, օ, ո՛չ, խնդրում եմ.- Գործուղում տվեք ապագա գնամ... (հ.1., էջ 378)։ Մի՞թե աչքի արձակուրդ է Կամ ուղեղի հանգըստյան օր (հ.1., էջ 391)։ Այն կնո՞ջ պես ինձ սփոփեմ , Որին միշտ էլ երբ օրհնում են ավանդաբար, Նույն հին բարի խոսքն են ասում... (հ.1., էջ 410)։ Մի՛ վրդովվեք,եթե ասեն Փառասերին հենց փառասե՛ր... Մի՛ վախեցեք անկեղծ խոսքից... Դե՛հ, քանի դեռ նա չի լալիս՝ Ծիծ չեն տալիս... Եվ թվաբա՛ն եղեք մի քիչ Ո՛չ թե ճշտին սուտ գումարեք, Այլ բաժանեք սուտը ճշտին, Ո՛չ թե վշտին գութ գումարեք, Այլ բաժանեք գութը վշտին։ Եվ պարծեցեք ո՛չ թե հարցով. Հպարտացեք լոկ լուծումո՛վ... Եղեք նաև քիչ հոգեբան. Եթե որդին տրտում երգով իր ծնողի մահն է սգում, Աղաչում եմ, մ՛ի ընդհատեք...(հ.1., էջ 417-418)։ Այն վա՛նկը ողբամ, այն վա՛նկը, որին Զրկում են միա՛կ իր ձայնավորից։ Նաև հավանգը, թե հավանգի մեջ լոկ ջուր են ծեծում (հ.1., էջ 422)։ Խուլին ասում են.- «Ցուրտ է, չես մրսու՞մ » (հ.1., էջ 432)։ Եթե ունես թռցնող թևեր՝ Չես զգա երբեք ծանրությունը քո...(հ.1., էջ 439)։ Աշուն է հիմա (հ.1., էջ 514)։ ...Այսպես չե՛ն սիրում։Այսպես մեռնում են մի դանդաղությամբ,Որով փտում են հին նավակները ծովախորշերում... Նորից չեն սիրում, սիրում են կրկին։[7]Այս կյանքի համար հոգացի՞ր՝ Պիղծ ես, Ե՛վ անօրեն ես, Ե՛վ բանադրված... Թատրո՞ն ես գնում՝ Ուրեմըն պիղծ ես. Կեր ու խու՞մ անում՝ Ուրեմըն պիղծ ես, սիրաթա՞փ եղար, Նոր սե՞ր արեցիր՝ Ուրեմըն պիղծ ես (Ընտիր էջեր, էջ 158-159)։

Կարելի է էջերով դուրս գրել և հուլունքի պես շարել սևակյան առանձնահատուկ, նուրբ ճաշակով համեմված հազարավոր նմուշներ։ Բավարարվենք բերվածով և նշենք նաև , որ ըստ հնչերանգի՝ անեթակա նախադասությունները լինում են և՛ պատմողական (...Ու ես կանգ կառնեմ,ինչպես կանգնում են Տրամվայներին մոտեցող, հասնող շնչառությունից, Ինչպես

[6] Տե՛ս Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հատոր 1., Երևան , 1972թ., էջ 176/ այսուհետ՝ հատոր 1/։
[7] Տես Պ. Սևակ, Ընտիր էջեր, Երևան 2012, էջ 105։

կանգնում են փակ դռան հանդեպ (Ընտիր էջեր, էջ 85)), և՛ հրամայական ( ...Եվ ինչ խաչագող դեռ պիտի հասնի,Որ քեզ կամենա գողանալ մեզնից ( Մի՛ ասա «մեզնից», « աշխարհի՜ց» ասա) (Ընտիր էջեր, էջ 143)), և՛ բացականչական ( Եվ հանեցե՛ք դիմակներդ, Բավակա՜ն է (Ընտիր էջեր, էջ 54)), և՛ հարցական ( Եգիպտոսն ինքն է ավազ ներմուծում... Ծաղրուծանա՞կ է ։ Կատա՞կ է հիմար ( Ընտիր էջեր, էջ 52))։

Մի նկատառում ևս. մեծ բանաստեղծի գործերում երբեմն հանդիպում ենք արի, եկ բայաձևերին,որոնք ոչ թե հրամայական հնչերանգի անենթակա նախադասությունների ստորոգյալներ են, այլ եղանակավորող բառեր ( վերաբերականներ) են.( -Դե ե՜կ, Վարդապե՛տ, եկ ու հավատա՜... –Դե ե՜կ, մահացա՜ծ, ու մի՛ համբառնա, Դե արի, արի պանդու՜խտ, երկիր մի՛ դառնա)։

Պետք է անդրադառնալ նաև ժողովրդի կենսափորձի, առանձնահատուկ մտածողության արգասիք դարձվածքներին, որոնք մի ուրիշ բույր ու թույր են հաղորդում խոսքին, հատկապես այն խոսքին, որ « կերպարանք» է առնում Պ. Սևակի ստեղծագործություններում։ Ջուր ծեծել դարձվածքը նշանակում է զուր աշխատել, ավելորդ, անօգուտ խոսել։ Դե՜հ, քանի դեռ նա չի լալիս, Ծիծ չեն տալիս բանաստեղծական տողում գործածվել է Մինչև երեխան չլացի, մայրը ծիծ չի տա առածի « պատառիկը»։ Առածի իմաստն այն է, որ մինչև հարցն առաջ չքաշես, խնդրի լուծմանը հետամուտ չլինես կամ բողոքի ձայն չբարձրացնես, սայլը տեղից չի շարժվի, հարցը չի լուծվի։

## ՄԱՍ Բ

## Անդեմ նախադասություններ

« Անդեմ են այն միակազմ նախադասությունները, որոնց կազմում չկա դիմավոր բայ, ուստի և չունեն քերականորեն արտահայտված ստորոգում։ Այդ նախադասության ձևավորման միջոցը հնչերանգն է, հնչերանգային ավարտվածությունը,որով արտահայտվում է խոսողի վերաբերմունքը և ասվածի հարաբերությունը իրականության նկատմամբ։ Օրինակ՝ Այժմ, որդի, ահա դու, ահա հորդ կտակը (ԱՇ)։

Անդեմ նախադասությունների ձևավորման միջոց է նաև խոսքային միջավայրը։ Այսպես՝ « Անծանոթը, տեսնելով տեսնելով տրամվային մոտեցող երեխային, բացականչեց՝ Երեխա՛ն, երեխա՛ն» (Սգր)։ Ընդգծված կապակցությունը նախադասություն չէր լինի, եթե չլիներ նրան նախորդող նախադասությունը։ « Երեք հազար, չորս հազար, հինգ հազար՝ ազատողին»։ Մարդկային կյանքի ամոթալի աճուրդ (ԱՇ)։

Անդեմ նախադասություններն առհասարակ հանդես են գալիս նաև միայնակ, ունեն ինքնուրույն, անկախ կիրառություն։ Դրանք հույզեր,կոչեր, առաջարկություններ, կարգադրություններ ու հրամաններ, երազանքներ արտահայտող նախադասություններ են, գործածվում են իբրև ամփոփ ու ամբողջական միտք արտահայտող շարահյուսական միավորներ։

Անդեմ նախադասությունները կազմությամբ լինում են՝ պարզ համառոտ, ինչպես՝ Լռությու՛ն։ Կրա՛կ։ -Սրաֆիոն Գասպարիչը,- ասացին...(ԱՇ), պարզ ընդարձակ, ինչպես՝ Պահպանե՛լ մաքրություն և կարգ ու կանոն։ Ջո՛կ, իմ ետևից, առա՛ջ։

Անդեմ նախադասությունները, ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելիության , լինում են բայական և անվանական[8]»։

Անդեմ նախադասությունները ևս անենթակա նախադասություններից ոչ պակաս հաճախականությամբ են հանդիպում Սևակի գործերում։

Այս նախադասությունները բանաստեղծի և առհասարակ հուզաշխարհի թարգմանիչներն են։ Նրանք զարդարում են գեղարվեստական ստեղծագործությունները, հորդուն են գրողի սրտից ու հոգուց։

## Բայական անդեմ նախադասություններ

[8] Տե՛ս Ս. Գյուլբուդաղյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1988թ., էջ 130-131։

« Բայական անդեմ են կոչվում այն միակազմ նախադասությունները, որոնց գլխավոր անդամը արտահայտված է անդեմ բայով, գերազանցապես անորոշ դերբայով և մեկ- երկու դեպքում էլ հարակատար դերբայով ( Հատակին չթքե՛լ։ Թքած։ Հերն անիծած)։ Այս նախադասությունների ձևավորման միջոցը հնչերանգն է։

Այս նախադասություններում դերբայներն անկախ գերադաս անդամ են։

Նախադասության որևէ անդամի լրացնող դերբայական կապակցությունը նախադասություն չէ, որովհետև չունի անկախություն, ինքնուրույնություն, հնչերանգային ավարտվածություն։ Օրինակ՝ Օ՜, ինչ քաղցր է երկինք վերանալ, վիշտ, հոգս մոռանալ նախադասության երկինք վերանալ, վիշտ, հոգս մոռանալ արտահայտությունները քացր է ստորոգյալի ենթականերն են, չունեն հնչերանգային ավարտվածություն։

Բայական անդեմ նախադասությունների գերադաս անդամը՝ անորոշ դերբայը միշտ դրվում է ուղիղ ձևով։

Բայական անդեմ նախադասությունները կազմությամբ լինում են պարզ, ինչպես՝ Կանաչները չտրորե՛լ։

Անդեմ նախադասությունը կարող է ունենալ մեկից ավելի համադաս գլխավոր անդամներ։ Օրինակ՝ Աստվածային հզոր ձեռքով Այս ցած կյանքից հեշտ ու անթև Թռչել երկինք, Ցավեր, հոգսեր, ողջ մոռանալ, Դժոխք իջնել...(ՀԹ)։ Այն լինում է նաև բարդ նախադասության բաղադրիչ, ինչպես՝ Հողին հանձնել միակ որդուն, որ պահպանում է քեզ... (ՎՏ)[9]»։

Բազմազան օրինակներից պարզ երևում է, որ բանաստեղծը վարպետորեն է կերտել նաև բայական անդեմ նախադասություններ և՛ պատմողական երանգի( Քո ծանոթ անվան երկու վանկերում Բանտարկվածի պես քայլել ետ-առաջ, Կրակը կողքիս՝ միշտ մնալ սառած, Բաց դուռը դեմըս՝ բանտարկված մնալ, Ոչ մի փորձ չանել և դուրս չգնալ. (Ընտիր էջեր, էջ 67)), և՛ հրամայական (Թե հարկավոր է նոր աղաց շինել, Ուրեմն՝ լինե՛լ... Ինչ էլ որ լինի, անպատճառ լինե՛լ( հատոր 1., էջ 419)), և՛ հարցական (Մի գլխով ի՞նչ անել, երբ այսքա՜ն դժվար է անսխալ ապրելը( Ընտիր էջեր, էջ 65)), և՛ բացականչական ( Ապրե՜լ, ապրե՜լ, այնպե՜ս ապրել, Որ սուրբ հողդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը ( հատոր1., էջ 365))։ Այս ինքնատիպ նախադասությունները արտահայտում են որևէ բան անելու ցանկություն, զարմանք, պահանջ, կասկած և այլն։

[9] Տե՛ս նույնը։

Հաջորդիվ բերենք նրա պոեզիայից ու արձակից բայական անդեմ նախադասությունների մի փոքրիկ փունջ. Խուսափուկ խլիրտի քղանցքից գեթ կառչել, Ստվերի վետվետուն քայլվածքը ճանաչել... Ի՞նչ անել և ինչպե՞ս . Հա՞ստ մանել, թե՞ բարակ. Լի օրվա երակին պատվաստել կիրակի՛, Վեճ մղել ծո՛վի հետ, Ամաչել կրակի՛ց, Չուշանա՛լ, չշտապե՛լ ( հատոր 1, էջ 320). Ա՛յ թե ճանաչել, Ա՛յ թե իմանալ ընդերքն ու հողը, Բայց ո՛չ թե ինչ-որ երկրաբանի պես... ( հատոր1, էջ 332). Ինչպես քայլել առանց ուղու, Այս ճամփան էլ շատ է շեղում։ Դոփել տեղու՞մ ( հատոր 1, էջ 338). Մեռնել. Եթե մեռնե՛լ... Թո՛ղ որ մեռնեմ հուր-կայծակից՝ միանգամից, Եթե մեռնե՛լ... Թո՛ղ սպանվեմ... Եթե գամվել՝ փարոսի՛ պես, Արնաքամվել՝ հերոսի պես, Ու քրքրվել՝ դրոշի՛ պես, Եթե մեռնե՛լ... ( հատոր1, էջ 362). Ապրե՛լ, ապրե՛լ, այնպե՛ս ապրել, Որ դու ինքդ էլ երբեք չզգաս քո սեփական մանրությունը... Ապրե՛լ, ապրե՛լ, ապրել մեկտե՛ղ, Կյանքդ խառնել նրանց կյանքին... Եվ ենթարկվել նրանց կամքին, Նրանց կամքն էլ քեզ ենթարկել, Դառնալ և՛ շանթ, և՛ շանթարգել...( հատոր 1, էջ 366). Երգել. Ա՛խ, թե երգելիս Զրընգալ, ինչպես բահը ջրտուքի, Դղրդալ, ինչպես ջաղացի ջրտուն, Եվ լռել, ինչպես ստվերը շոգին։ Ա՛խ, եթե գտնել Այդպես երգելու դյուրին հնարը... Ա՛խ, եթե երգով լալ այնպես, ինչպես ծառերը խեժով,- արցունքո՛վ բուժող,- Եվ սպիանալ, ինչպես ջրերը կանաչ ջրմուռով... Երգել ջրի պես... Եվ նվագակցել, ինչպես կաթիլը... Ա՛խ, եթե հնչել գովերգի նման... Իսկ թե տրորվել՝ ավազի՛ նման, Իսկ թե օրորվել՝ օրորոցի պես... Եթե գալարվել՝ ոչ թե օձի՛ պես, այլ շեկ բոցի՛ պես։ Եթե դալարվել՝ աղջկա ճկուն իրանի նման։ Եթե խելառվել՝ ավելի լավ է անհաջող սիրուց։ Եթե ոլորվել՝ այն թելի նման... Եթե գլորվել՝ այն լուրի նման... Եթե մոլորվել՝ այն տուղտի նման... Եթե ենթարկվել՝ ինչպես երակը արյան մղումին. Եթե ուղարկվել՝ աստղերից եկած պայծառ լույսի՛ պես, Եթե քողարկվել՝ ապա հույսի պես. Եթե ընդգրկվել՝ զորասյունի մեջ... Եթե վիճարկվել՝ վիճարկվել իբրև խոր ճշմարտություն. Ու եթե զարկվել՝ տագնապի ժամին ահազանգի պես. Ու եթե զրկվել՝ ապա սուտ փառքից... Ու եթե լլկվել՝ բաժանման ցավից, Ու եթե լալկվել՝ արհամարհանքից, Ու եթե ծլկվել՝ ինչպես անձրևը ճաքճքված արտում. Իսկ թե իմանալ՝ ինչպես արևը իր ծագման պահը. Ու թե զարմանալ՝ ո՛չ թե լավ բանից, այլ միայն վատի՛ց. Թե ընդարմանալ՝ որպեսզի նորի՛ց, կրկի՛ն թարմանալ. Թե ընդդիմանալ՝ նաև անցողիկ հաջողությանը, Ու թե դիմանալ՝ ապա դիմանալ ժամանակների խիստ քննությանը... Ու եթե մի օր կասկած հարուցել, ապա բուրավետ այն հոտերի պես... Ու եթե մի օր դժվար հասկացվել, Ապա հինավուրց այն տոտե՛մի պես, Ու եթե մաշվել՝ Ապա հեսանվող մի դանակի՛ պես. Եթե ետ քաշվել՝ Հաղթանակ տարած մի բանակի պես. Եթե չհիշվել՝ Չքնաղ լեգենդի հեղինակի՛ պես... Ու եթե հիշվել՝ ժողովրդական եղանակի՛ պես...( հատոր 1, էջ 367-370). Ինչու՞ խփվել պատեպատ էլ... Լավ չէ՞ արդյոք ապաստանել հին լաթերին( հատոր1, էջ 391), « Լինե՞լ-չլինե՞լ,- այս է խնդիրը»... Եթե վառվում է մորդ թոնդիրը, էլ ի՞նչ խնդիր է. Ուրեմն՝ լինե՛լ ( հատոր 1, էջ 419), Գոնե պիտի ամաչել գերեզմանափորից ու խեղկատակից և XX դարի

բանաստեղծությունը չըմբռնել իբրև խաղիկների բազմահարկություն[10]: Ստեղծե՛լ...Ստեղծելը ձվածություն չէ (նույնը, էջ 30):

## Անվանական անդեմ նախադասություն

«Անվանական են կոչվում այն միակազմ նախադասությունները, որոնց գերադաս անդամը արտահայտված է որևէ անունով: Սրանք ևս նման կերպ ենթակա և ստորոգյալ չունեն, ունեն գերադաս անդամ, որը կառույցի քերականական կենտրոնն է: Նրանց ձևավորման միակ միջոցը հնչերանգն է՝ հարցական, պատմողական, հրամայական, բացականչական: Բայական անդեմ նախադասությունների պես սրանք էլ հուզական բնույթ ունեն, արտահայտում են հուզականություն: Օրինակ՝ Սև գիշեր, և՛ հուշեր, և՛ խոհեր անհամար...

Անվանական անդեմ նախադասության գերադաս անդամը անվանական լրացումներ է ունենում: Օրինակ՝ Սրամիտ բախտի ինչպիսի՜ հանաք ու ծաղրուծանակ(ՊՍ):

Անվանական անդեմ նախադասության գերադաս անդամի հետ բայական լրացման առկայությունը դեռ չի ենթադրում ստորոգյալի զեղչում և չի դիտվում որպես երկկազմ նախադասություն: Օրինակ՝ Շուրջը մարդիկ, կանայք հագած-կապած(ԵՉ):

Անվանական նախադասությունների հաղորդումը առնչվում է ներկա ժամանակի հետ, արտահայտում է առարկայի առկայությունը խոսքի պահին: Օրինակ՝ Ահա գործարանը... Ահա քաղաքը(Հակ):

Անվանական նախադասությունների գերադաս անդամը արտահայտվում է՝

ա)Գոյականի ուղղական հոլովով. Օրինակ՝ Օ՜հ, մանկական խաբեությու՜ն...

Գոյական գերադաս անդամի հետ կարող են լինել ահա՛, ա՛յ ցուցական բառերը և ձայնարկություններ: Օրինակ՝ Ահա բուն ազգային երգ(ՄՆ): Կռու՜նկ, .... Ա՜խ, էլ ի՞նչ սև կռունկ(ՊՍ):

Գերադաս անդամի կրկնությունը արտահայտում է առկա առարկայի շատությունը: Օրինակ՝ Շիրմաքարե՜ր, շիրմաքարե՜ր, շիրմաքարե՜ր և մամուռի ու փոշու տակ՝ շիրմագրե՜ր և ի՜նչ խոսուն շիրմագրե՜ր(ՊՍ):»

բ) Դերանվան ուղղական հոլովով, որին առընթեր լինում են նաև ահա, այ բառերը.Ահա նրանք , այն թանկագին էակները (ԱՇ):

[10] Տե՛ս Պ. Սևակ, Վերնագիրը վերջում, Երևան, 1991թ., էջ 42

գ) Թվականի և գոյականի կապակցությամբ՝ Ութը հարյուր ութսունմեկ թիվ, էջմիածին (ՊՍ)։

Անվանական անդեմ նախադասությունները կազմությամբ սովորաբար պարզ են լինում՝Փու՛չ աշխարհ, փու՛չ աշխարհ(ԱՇ)։ Սրանք կարող են ունենալ համադաս(բազմակի) գլխավոր անդամներ՝ Դալուկ դաշտեր,մերկ անտառ...Մահացողի տխուր կյանք(ՎՏ)[11]։

Լեզվաբաններ Հ. Զաքարյանն ու Յու. Ավետիսյանը վերոնշյալ մեկնաբանությանը ավելացնում են իրենց վերլուծությունը. «Անվանական է այն անդեմ նախադասությունը,որի գերադաս անդամը արտահայտված է գոյականով կամ գոյականական դերանունով, երբեմն՝ ածականով, թվականով, մակբայով՝ Անձրև, քամի, սև կամար... Ի՞նչ անամոթություն։ Առա՛ջ։ Բ արի գիշեր...

Լինում են նաև անդեմ նախադասություններ, որոնց գերադաս անդամը արտահայտված է վերաբերականով կամ ձայնարկությամբ. Վա՜յ մեզ, մոլորյալներիս, Ո՛չ ինքնակոչ նախագահին։ Ա՛յ քեզ բան... Ավա՜ղ փառացս անցավորի»[12]։

Սնակի գունագեղ ներկապնակից ստորև ընթերցողի դատին ներկայացնենք բոլոր հնչերանգների անչափ հետաքրքիր անվանական անդեմ նախադասություններ՝ արտահայտված թե՛ գոյականով, թե՛ գոյականաբար գործածված բայով,քանակական թվականով, ածականով, թե՛ դերանունով, թե՛ ածականով, թե՛ մակբայով, թե՛ կապային կառույցով, թե՛ ձայնարկությամբ ու վերաբերականով, թե՛ զանազան կրճատումների հետևանքով առաջացած մաղթանքի և այլ խոսքերով։ Այդ նախադասությունները հյութեղ են,որովհետև ոճական առինքնող հնարանքներ են կամ դարձվածքներ, որոնցով տաղանդավոր լեզվաշինարար-ճարտարապետը կռել-կոփել է իր հուզաշխարհի շեղումները։

Հավատո հանգանակի(հ.1., էջ 480), ...Ահա վաղվա Ալավերդին,Ահա Վեդի՛ն,Արտաշա՛տը, Դվին ահա... (հ.1., էջ 119), Հայտնություն(հ.1., էջ 439), Մեր հին գինով՝ ևը՛ս մի հին ու նոր կենաց(հ.1., էջ 426), Անհարց պատասխան(հ.1., էջ 444), Քայլող հիշողություն կամ վառվող արյուն(հ.1., էջ 442), «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»(Ընտիր էջեր, էջ 150), Ահավասիկ այս խնձորը՝ Մեղրածորը, Կամ այս դեղձը՝ Անձեռակերտ-անստեղծը... (հ.1., էջ 416), Ժոսկեն դը Պրե, Պալեստրինա, Օրլանդո Լասոս, Պախելբել, Զեգերտ, Ցիպելի... «Խորալներ», «մեսսաներ», «ավե Մարիաներ», «օրատորիաներ»,( «Դիմանկարի ամբողջացման համար» հոդված, էջ 253), Բա՜ռը։ Նա նման է աղջկա(«Վերնագիրը վերջում» ժողովածու, էջ 47), Հագուստով ծնվածը(Ընտիր էջեր, էջ 93), Անվերնագիր(հ.1., էջ 487), Անմեղ- մեղավոր(հ.1., էջ 464),... Այս հմայիչ երազներից գեթ երկուսը

[11] Տես Ս. Գյուլբուդաղյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1988թ., էջ 133-136։
[12] Տես Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան, Շարահյուսություն,Երևան, 2015թ., էջ 103

կկատարվե՞ն... – Միայն մեկը և -վերջինը(հ.1., էջ 364), Մեզանից մեկը(Ընտիր էջեր, էջ 88), Մաքսանենգորեն(հ.1., էջ 314), Նախերգանքի փոխարեն(հ.1., էջ 439), Վառարանի առաջ(հ.1., էջ 445), Իբրև սկիզբ(Ընտիր էջեր,էջ 21), Եվ վա՛յ ինձ ու քեզ. Այսքանից հետո Մենք մեզ կոչում ենք նաև... բանաստե՛ղծ... (հ.1., էջ 335), Բայց, փա՛ռք աստըծո, բանը չհասավ Ո՛չ ամուսնության, Ո՛չ էլ զավակի(հ.1., էջ 444), Գալուստդ բարի՛(հ.1., էջ 400), Մի՛ ուշացեք, դե՛հ, ձեզ մատաղ... (հ.1., էջ 424), Դե՛հ, խմողաց խու՛մը անուշ, Եռեփ գինու կու՛մը անուշ, Խորովածի հու՛մը անուշ... (հ.1., էջ 425), Բարի գիշեր... Քեզ գիշե՛ր բարի.. (Ընտիր էջեր, էջ 121), Բարև(Ընտիր էջեր, էջ 123), Մի վարդապետ բեղ-մորուքով Վանք է եկել, բայց ո՛չ ուխտի... –Մեղա՛ քեզ, տէ՛ր(«Անլռելի զանգակատուն» պոեմ, էջ 103)։

## Բառ- նախադասություն

«Սրանք պատասխանական, վերաբերական( եղանակավորող ) բառեր են, փոխարինում են նախադասությանը,դրանով կատարում են հաղորդակցական դեր։ Օրինակ՝

-Ուրեմն վաղը գնում ենք հարձակվա՞ն։ _Այո՛։

- Նա կհամաձայնի՞։ _Ո՛չ։

Այս ձևով նախադասություններին կարող են փոխարինել՝ այո՛,ո՛չ, իսկապե՞ս, չէ՛,

ինչու՞, կարծեմ,անշուշտ, չէ՛ մի և այլ վերաբերական բառեր։

Եթե հիշյալ բառերը հանդես են գալիս նախադասության կազմում, փոխարինող չեն, հաղորդակցական դեր չեն կատարում,ուստի նախադասություն չեն։ Օրինակ՝ Մարտին կարող է ձյուն գալ։ _Մի՞թե(մամուլ)։ Մի՞թե վերջին պոետն եմ ես... (ՎՏ)։ Առաջինում միթե-ն փոխարինում է նախադասությանը, երկրորդում՝ ոչ։

Բառ- նախադասությունները միայնակ են հանդես գալիս,բայց երբեմն կարող են պարագա լրացում ունենալ։ Օրինակ՝ -Խմբագիրն այստեղ չէ՞։ _ Դժբախտաբար ո՛չ(ՆԴ)։ Այսպես նախադասությանը փոխարինել կարող են՝ Ինչու՞ չէ, իհարկե չէ՛, անպայման այո՛, գուցե և ոչ՛, բնավ ոչ՛, հիմա ոչ՛,ամենևին էլ չէ՛ և այլն։

Բառ-նախադասությունները արտահայտում են .

1. Հաստատում, համաձայնություն՝ հա՛, այո՛, ինչու՞ չէ, հապա ինչպե՞ս և այլն։ Օրինակ՝ Այժմ դպրոցը դպրոցի նման է։ _ Այո՛, իհարկե։

2. Ժխտում՝ քավ լիցի, երբեք, հազիվ թե, ոչ մի դեպքում։ Օրինակ՝ - ՈՒրեմն բացատրություն չի՞ եղել։ _ Դեռ ո՛չ։
3. Արհամարհանք՝ իսկապե՞ս, չէ՛ մի, ո՞նց չէ, մի՞թե և այլն։ Օրինակ՝ -Դու ես պատասխան տալու։ _ Մի՞թե ,- հարեց նա արհամարհանքով(ՆԴ)։
4. Հարցում, զարմանք՝ այո՞, չէ՞, ոչ՞, ճի՞շտ, ոչի՞նչ, հա՞։ Օրինակ՝ - Ես չեմ ընդունում ձեր որոշումները։ _ Այո՞[13]»։

Ստորև բերվում են այս անգամ բառ- նախադասության սևակյան գոհարեր. Արտառո՞ց եմ ես, Անհասկանալի. Ոչի՛նչ (հ.1,էջ 457) , Հուսահատության պահե՞ր։ Ինչպե՞ս չէ(հ.1, էջ 484), Մասու՞նք։ Ինչպե՞ս թե(հ.1,էջ 510), Եվ ուրիշ ոչի՞նչ(հ.1, էջ 334), Խումբը՝ -Հա՛ -հա՛, հե՛,հե՛, հա՛-հա՛...Խումբը նորից է խառնվում –Դե, թը՛ռ –թըռի՛, Հո՛պտա – տըմբա՛(«Անլռելի զանգակատուն» պոեմ, էջ 98-99), Գրականության զարգացումը պիտի ծներ... Թումանյանին, սրանից հետո՝ Տերյանին, սրանից հետո՝ Չարենցին։ Իսկ հիմա՞(«Վերնագիրը վերջում», էջ 78),Բանաստեղծությունը Այբբենարան չէ։ Այո՛։ Հազար անգամ այո՛ ՞(«Վերնագիրը վերջում», էջ 47);

[13] Տես Ս. Գյուլբուդաղյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1988թ., էջ 137-138

## Եզրակացություն

Այսպիսով՝ կարելի է անվերջ քննարկել հայերենում միակազմ նախադասություններն իրենց բարդություններով, յուրահատկություններով ու վիճելի կողմերով։ Ակնհայտ է, որ Սևակի գրական վաստակի մեջ մի ստվար շերտ են այս նախադասությունները, որոնք աշխուժացրել, ջերմությամբ են լցրել բանաստեղծի խոսքը։ Միակազմ նախադասությունների ուսումնասիրությունը հետաքրքիր է և ցանկալի. Այն կարելի է դարձնել շարունակական մեր գրականության հայտնի, ինչու չէ, նաև նորահայտ, նորաթուխ դեմքերի ստեղծագործություններում։

Հայոց լեզվի «Շարահյուսություն» և «Ոճագիտություն» դասընթացների համար հետազոտական աշխատանքի շրջանակներում ծաղկաքաղ արված օրինակները, որոնք խոսքի հաճելի համեմունքներ են, տեսականը կդարձնեն ավելի տեսանելի, նպաստող հարուստ հենք կդառնան այս նախադասությունների տեսակների հեշտ յուրացման հարցում և՛ դպրոցի աշակերտի, և՛ բուհի ուսանողի համար։

Լավ կլինի, որ կնճռոտ, վիճելի մնացած տեսակետները հարթվեն և միօրինականացվեն մեր երախտավոր լեզվաբանների ու մասնագետների կողմից, որպեսզի սովորողը երկվության մեջ չընկնի, չհիասթափվի սովորելուց՝ բախվելով բարդությունների։

## Օգտագործված գրականության ցանկ

1. Ս. Գյուլբուդաղյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1988թ.

2. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1987թ.

3. Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան, Շարահյուսություն, Երևան, 2015թ.

4. Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հատոր 1., Երևան, 1972թ.

5. Պ. Սևակ, Ընտիր էջեր, Երևան, 2012թ.

6. Պ. Սևակ, Վերնագիրը վերջում, Երևան, 1991թ.

7. Պ. Սևակ, «Անլռելի զանգակատուն» պոեմ, Երևան,

# Բովանդակություն

Ներածություն
Մաս 1. Անենթակա նախադասություններ

Մաս 2. Անդեմ նախադասություններ

Բայական անդեմ նախադասություններ

Անվանական անդեմ նախադասություններ

Մաս 3. Բառ-նախադասություններ

Եզրակացություն

Օգտագործված գրականության ցանկ